

Ա Ջ Դ

Աշխատասիրութիւնս սկսաւ հրատարակուիլ Հանդէս Ամսօրեայի 1906 տարւոյ Յուլիս թուին մէջ (էջ 216) եւ աւարտեցաւ 1908 տարւոյ Յունիս թուով: Ասկէ հանուած է այս առանձին տպագրութիւնը, որուն մէջ շատ յաւելուածներ եւ ուղղութիւններ եղան, եւ այս պատճառաւ սոյն հրատարակութիւնս է գործածելին:

Գործոյս բովանդակած յիսունուհինգամեայ եւ աւելի ժամանակի ազգային պատմութիւնը, եւ ի մասնաւորի հայ կաթողիկէ նշանաւոր եկեղեցականներու կենսագրութիւնները վաւերագիրներու վրայ հիմնուած նորագոյն տեղեկութիւններ կը բովանդակեն:

Քիչ ատենէն տպագրութեան պատրաստ կ'ըլլայ նաեւ Կ.Պոլսոյ հայ Պատրիարքներու եւ անճնաւորութեանց, եւ ի մասնաւորի հայ կաթողիկէ հասարակութեան սկզբնաւորութեան եւ անցքերուն